ՍՍՀՄ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՆՐԱ ԱԶԳԱՅԻՆ-ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՄԱՍԻՆ ԼԵՆԻՆՅԱՆ ՈՒՍՄՈՒՆՔԻ ՀԱՂԹԱՆԱԿ Է

ԱՐՄԵՆԱԿ ԲԵԳԻՑԱՆ

Դարերի ընթացքում բազմաթիվ ազգերի պետականության, միջպետական, ազգամիջյան, դաշնակցային և այլ փոխհարաբերությունների հարցը եղել է աշխարհում կարևոր պրոբլեմներից մեկը։ Մինչև Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը Լենինի կուսակցությունից բացի չի եղել ոչ մի կուսակցություն, որը գիտականորեն լուծեր հարցերի այդ համալիրը։ Այն հատկապես արդիական է բազմազգ պետությունների համար։ Եվ դա հասկանալի է։ Չէ՞ որ մեր մոլորակի բնակչության հսկայական մեծամասնությունն ապրում է բազմազգ և բազմացեղ պետություններում։

Հասարակական զարգացման պատմությունը և տեսությունը վկայում են, որ ինչպիսին հասարակության մեջ հասարակական կարգն է, այնպիսին են նրանում տիրապետող ազգային հարաբերությունները։ Բուրժուական և նրան նախորդող այլ շահագործողական քաղաքական և սոցիալ-տնտեսական սիստեմների համար ազգային ճնշումն ու ռասսայական անտագոնիզմն անխուսափելի են, ինչպես և մարդու կողմից մարդու շահագործումը։ Բուրժուական բազմազգ բոլոր պետությունների տարեգրությունն անընդհատ սրվող ազգամիջյան հակասությունների թվարկում է։ Այլ կերպ լինել չի էլ կարող, քանի որ մասնավոր սեփականության ծնունդ մրցակցությունը, ձգտումը եսասիրական հաջողության բաժանում են մարդկանց, ազգերին, ժողովուրդներին ու ցեղերին, նրանց հակադրում են մեկը մյուսին։ Զարգացման տրամաբանությամբ բուրժուական բազմազգ պետությունները վերածվում են ժողովուրդների բանտի։ Բացառություն չէր կազմում և ցարական Ռուսաստանը, որտեղ ևս տեղ էր գտել բնակչության շովինիստական անբարոյացումը, կատարվում էր այլազգիների սանձարձակ հալածանք, տպագրվում էին նրանց դեմ ուղղված հոդվածներ ու հատորանոց աշխատություններ։

Սոցիալական և ազգային ճնշումը հարուցում էր ճնշված ազգերի ատելությունը դեպի ցարիզմը։ Ազգային ճնշման դեմ մղված պայքարում Ռուսաստանի ճնշված ժողովուրդները հենվում էին բնական դաշնակցի և ղեկավարի՝ աշխատավոր ռուս ժողովրդի և նրա առաջադեմ գործիչների վրա։ Ռուս հեղափոխական-դեմոկրատները խիստ քննադատում էին ցարիզմի ազգային ճնշման քաղաքականությունը։ Ն. Չերնիշևսկին հանդես էր գալիս հանուն յուրաքանչյուր ժողովրդի իրավունքի՝ ինքնուրույն տնօրինելու իր ճակատագիրը, վարվելու այնպես, ինչպես ինքն է ուզում[1]։ Ռուս հեղափոխական-դեմոկրատների գաղափարները խորապես հուզում էին Ռուսաստանի բոլոր ժողովուրդներին, նրանց ռուս ժողովրդի հետ պայքարի էին մղում ընդհանուր թշնամու՝ ցարական ինքնակալության դեմ։

Ռուս հեղափոխական դեմոկրատները չտվեցին և չէին էլ կարող տալ Ռուսաստանում ազգային հարցի լուծման գիտականորեն հիմնավորված ծրագիր։ Դա հնարավոր դարձավ միայն բանվոր դասակարգի, լենինիզմի դիրքերից։ XIX դ. վերջին, երբ Վ. Ի. Լենինը դնում էր համառուսաստանյան մարքսիստական կուսակցության հիմքերը, Ռուսաստանում ավարտվել էր

---

[1] Н. Г. Чернышевский, ПСС в пятнадцати томах, т. VIII, М., 1950, с. 483.

տասնյակ մեծ ու փոքր ժողովուրդներով տարածքների միացումը։ Դրա հետևանքով ռուսական կայսրությունը դարձել էր ազգային կազմով աշխարհի ամենախայտարդնտ պետություններից մեկը։ Ըստ 1897 թ. մարդահամարի տվյալների, վելիկոռուսները կազմում էին Ռուսաստանի բնակչության միայն 43,3%-ը, իսկ ոչ ռուս ազգությունները, ժողովուրդներն ու ցեղերը՝ 56,7%-ը։ Տասնյակ ոչ ռուս ժողովուրդների միացումը Ռուսաստանին ուներ առաջադիմական նշանակություն, իսկ նրանցից ոմանց, օրինակ, հայ ժողովրդի համար, դա նաև փրկություն էր անխուսափելի ֆիզիկական ոչնչացումից։ Սակայն ցարական իշխանությունները, Վ. Ի. Լենինի խոսքերով ասած, «ոչ այնքան միավորել են, որքան ճնշել են մի շարք այլ ազգերի»[2]։

Վ. Ի. Լենինը և նրա կուսակցությունն ազգային-պետական հարցին վերաբերվեցին որպես համառուսաստանյան ազատագրական շարժման կիզիչ հարցերից մեկի։ Պատմությունը համառուսաստանյան ազատագրական շարժման լենինյան փուլի առաջ խնդիր դրեց Ռուսաստանը վերածել այնպիսի երկրի, որը ոգեշնչող օրինակ ծառայեր աշխարհի բոլոր բազմազգ պետությունների համար։ Վ. Ի. Լենինը և կուսակցությունը համառուսաստանյան ազատագրական շարժման պատմության մեջ առաջին անգամ մշակեցին գիտականորեն հիմնավորված ծրագիր և քաղաքականություն՝ Ռուսաստանի ժողովուրդների ազգային-պետական կառուցվածքի հարցի մասին։

Փոքրերի նկատմամբ խոշոր պետությանն առավելություն տալով հանդերձ, Վ. Ի. Լենինը ոչ միայն չէր ժխտում ոչ ռուս ազգերի պետականության իրավունքը, այլև հռչակեց նրանց ինքնորոշման իրավունքը, ընդհուպ մինչև անջատումը և ինքնուրույն պետության կազմավորումը։ Ավելին, հետագայում հաշվի առնելով 1917 թ. հեթհոկտեմբերյան կոնկրետ պայմանները, Վ. Ի. Լենինը եղավ մեր երկրի շատ ազգերի և ժողովուրդների ազգային սովետական պետականության ստեղծման ոգեշնչողը։ Վ. Ի. Լենինը և կուսակցությունը միաժամանակ ընդունում էին ազգերի և ժողովուրդների ազգային-պետական կառուցվածքի ձևերը՝ արտահայտված մարզային ինքնավարության ծրագրային պահանջում այն ազգերի համար, որոնք չէին ցանկանա իրացնել բաժանման փրենց իրավունքը։ Ազգային-պետական հարցի մասին լենինյան ծրագրի և քաղաքականության մեջ կենտրոնականը Ռուսաստանի բոլոր ազգերի բանվորների քաղաքական կազմակերպության և պայքարի միասնության ապահովումն էր։ Վ. Ի. Լենինը և կուսակցությունը ելնում էին այն բանից, որ ո՛չ ուկրաինացին, ո՛չ լիտվացին, ո՛չ հայը, ո՛չ վրացին ազատ չեն լինի, քանի դեռ Ռուսաստանի բանվոր դասակարգը մնում է ստրուկ։ Նրանք հռչակեցին և պաշտպանեցին Ռուսաստանի բոլոր ազգերի բանվորների և աշխատավորների միասնության բացարձակ անպայման բնույթը ու առաջ քաշեցին ազգերի ինքնորոշման իրավունքի պահանջը հանուն նրանց բարձրագույն և կամավոր միասնության։ Կուսակցությունը ռուս ազգի լենինյաններին պրոպագանդում էր «անջատվելու ազատությունը», իսկ ոչ ռուս ազգերի լենինյաններին՝ «միանալու ազատությունը»։ Վ. Ի. Լենինը և կուսակցությունն այդ դիրքերից էին պայքարում Ռուսաստանի ազգային-պետական կառուցվածքի հարցում աջ և «ձախ» թեքումների դեմ։ Նրանք քննադատում էին լեհական սոցիալիստական կուսակցության աջ, ազգայնական դիրքորոշումը, որը բացարձակացնում էր ազգերի ինքնորոշման իրավունքի մասին պահանջը, այն խառնելով անջատվելու պարտադիրության հետ։ Վ. Ի. Լենինը և կուսակցությունը հավասարապես խիստ էին քննադատում ձախերի, մասնավորապես Պյատակովի, նիհիլիստական դիրքորոշումը, որոնք ազգերի ինքնորոշման իրավունքի մասին թեզը համարում էին նահանջ մարքսիզմի ինտերնացիոնալիստական սկզբունքներից։ Ազգային հարցի վերաբերյալ ռեֆերատի թեզիսներում Վ. Ի. Լենինը նշել է. «որոշ մարդիկ մտածում են, որ ազգային պետությունը ավելի մեծ նացիոնալիզմ է, քան կուլ-

---

2 Վ. Ի. Լենին, երկ, հ. 21, էջ 143։

տուր-ազգային ավտոնոմիան։ Միամիտ և ծիծաղելի մոլորություն։ Ազգային պետությունը՝ համաշխարհային պատմության փորձի մեջ կանոն է»[3], առանց ազգային պետության իրավունքի ազգերի կամավոր մերձեցման ճանապարհ չկա[4]։ Քննադատելով Պյատակովի նման մարդկանց, որոնք չէին հասկանում «անջատվելու ազատության» և «միանալու ազատության» երկկողմանի պրոպագանդայի բոլշևիկյան բանաձևի կենսական ճշմարտացիությունը, Վ. Ի. Լենինը գրել է. «Հարցի էության մեջ չթափանցած մարդիկ «հակասական» են համարում այն, որ ճնշող ազգերի սոցիալ-դեմոկրատները պնդեն «անջատվելու ազատությունը», իսկ ճնշված ազգերի սոցիալ-դեմոկրատները՝ «միանալու ազատությունը»։ Բայց մի փոքր խորհրդածությունը ցույց է տալիս, որ այլ ուղի դեպի ինտերնացիոնալիզմը և ազգերի միաձուլումը, տվյալ դրությունից դեպի այդ նպատակն այլ ուղի չկա և չի կարող լինել»[5]։ Ռուսաստանի ժողովուրդների ազգային-պետական կառուցվածքի ձևի ու բովանդակության հարցի մասին Վ. Ի. Լենինի մշակած դիալեկտիկական մատերիալիստական տեսությունը, ինչպես նաև դրա իրականացման համար կուսակցության հետևողական պայքարն ապահովեցին մեր երկրի ժողովուրդների համաշխարհային պատմական հաղթանակը։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունն կատարվեց ազգերի ինտերնացիոնալիստական համագործակցության լենինյան քաղաքականության նշանաբանով։ Ազգերի փոխհարաբերություններում թշնամանքի ու անվստահության փոխարեն ուժի մեջ մտան վստահությունը մեկը մյուսի նկատմամբ, և ազգերը միմյանց միջև սկսեցին կարգավորել սկզբունքորեն նոր հարաբերություններ՝ հիմնված փոխադարձ վստահության, եղբայրական համերաշխության ու փոխօգնության վրա։ Հոկտեմբերյան հեղափոխության առաջին օրերից սովետական կյանքի օրենքը դարձավ սովետների երկրի բոլոր ազգերի ու ժողովուրդների անշեղ մերձեցումը։ Ի տարբերություն բուրժուական իշխանության, ազգամիջյան գժտությունների հիմնական կազմակերպիչների իշխանության, սովետական իշխանությունը, իր բնույթով լինելով ինտերնացիոնալիստական, ազգերին մղում է մերձեցման, բարեկամության, միասնության։ Ազգերի միջև եղբայրական կապերի զարգացումն ու խորացումը հանդիսացան մեր երկրում նոր հասարակարգի հաղթանակի կարևորագույն պայմաններից մեկը։

Առավելությունը տալով խոշոր դեմոկրատական պետությանը, Վ. Ի. Լենինը և կուսակցությունը հին հակադեմոկրատական բազմազգ պետությունն առանձին ազգային պետությունների մասնատվելու պայմաններում հանդես էին գալիս հանուն նրանց ֆեդերատիվ միավորման։ Դեռևս 1917 թ. հունիսին սովետների համառուսաստանյան I համագումարում արտասանած ճառում Վ. Ի. Լենինն ընդգծեց, որ հանդես գալ ընդդեմ ազգերի ինքնորոշման՝ «նշանակում է վախենալ առանձին հանրապետություններից։ Բանվորների և գյուղացիների տեսակետից դա սարսափելի չէ։ Թող Ռուսաստանը լինի ազատ հանրապետությունների միություն»[6]։ Ազատ հանրապետությունների ազատ միության մասին միտքը Վ. Ի. Լենինը կրկնեց «Ուկրաինա», «Ուկրաինան և Ռուսաստանի կառավարող կուսակցությունների պարտությունը» հոդվածներում և այլն[7]։ Վ. Ի. Լենինը մշտապես և անշեղորեն ձգտում էր Ռուսաստանի բոլոր ազգությունների բանվորների և աշխատավորների անքակտելի պետական-իրավական միասնության հաստատմանը, պայքարում էր այն ամենի դեմ, ինչը խանգարում էր դրա պահպանմանն ու ամրապնդմանը,

3 Վ. Ի. Լենին, նույն, հ. 24, էջ 386։
4 Վ. Ի. Լենին, նույն, հ. 30, էջ 160։
5 Վ. Ի. Լենին, նույն, հ. 30, էջ 56։
6 Վ. Ի. Լենին, նույն, հ. 32, էջ 354։
7 Վ. Ի. Լենին, նույն, հ. 32, էջ 420—421, 431—434։

ընդդեմ բուրժուական ազգայնականության, հանուն ինտերնացիոնալիզմի։ Լենինյան հանճարով հայտնագործվեց և նրա ղեկավարությամբ իրագործվեց մեր երկրի կոնկրետ պայմաններում ազգային-պետական հարաբերությունների ամենապատակահարմար ձևը՝ սովետական ֆեդերացիայի շրջանակներում ազգերի պետական քննադատության պահպանումը։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունն ու նրա ստեղծած սովետական պետությունն արմատապես փոխեցին Ռուսաստանի ժողովուրդների ճակատագիրը։ Փշրելով ազգային ճնշման շղթաները, սովետական իշխանությունն Ուկրաինայի, Բելոռուսիայի, Ադրբեջանի, Հայաստանի, Վրաստանի, Խորեզմի և Բուխարայի ժողովուրդներին օգնեց կազմավորել և ամրապնդել անկախ սովետական սոցիալիստական և ժողովրդական հանրապետություններ, Բաշկիրիային, Թաթարիային և Դաղստանին՝ ինքնավար հանրապետություններ, Չուվաշիային, Կալմիկիային և Կարելիային՝ ինքնավար մարզեր։ Սովետական ազգային պետականության ձև է նաև ազգային օկրուգը։ Չնայած առաջին ազգային օկրուգը (Կոմի-Պերմյակյան) կազմավորվել է Վ. Ի. Լենինի մահվանից հետո (1925 թ.), բայց այդ ձևը ևս հայտնաբերել է նա։ Դեռ Հոկտեմբերի հաղթանակից շատ առաջ նա ցույց է տվել, որ բոլշևիկների առաջ քաշած դեմոկրատական պետության պլանը նախատեսում է նրա շրջանակներում ամենափոքր ազգային օկրուգների ինքնավարություն[8]։ Յուրաքանչյուր սովետական ազգ կապված չէ իր ազգային պետականության ձևի ընտրության մասին մեկեն ընդունած որոշմամբ։ Ամեն մի ազգ ինքնորոշման իրավունքին համապատասխան կարող է իր պետականությունը վերափոխել պետականության ավելի բարձր ձևի։ Այդ են վկայում շատ ինքնավար կազմավորումների վերափոխումները։ Այսպես, Մարիական, Ուդմուրտական, Չուվաշական և Տուվայի ինքնավար մարզերը վերափոխվեցին ինքնավար հանրապետությունների, որոշ ինքնավար հանրապետություններ, օրինակ, Ղազախականն ու Կիրգիզականը՝ միութենականի։ Աշխարհը վկա դարձավ միանգամայն եզակի ազգային-պետական շինարարության։ Ոչ մի աշխարհամասում, ոչ մի բազմազգ երկրում չէր եղել, որ նախկինում տիրապետող ազգի օգնությամբ ստեղծվեին ազատ և իրավահավասար ազգային պետություններ, ինքնավար հանրապետություններ և ինքնավար մարզերի ձևով պետական կազմավորումներ, որոնց զարգացումն ընթանար ազգերի ու նրանց պետականության մերձեցման հենքի վրա։

Հաղիվ ձևավորված որպես անկախ սովետական հանրապետություններ, մեր երկրի ժողովուրդները մտան եղբայրական դաշնակցային կապերի մեջ՝ դրանում տեսնելով իրենց վերջնական հաղթանակի գրավականը։ Ուկրաինայի սովետների I համագումարը դեռևս 1917 թ. դեկտեմբերին հռչակելով սովետն ուկրաինական սովետական պետության ստեղծումը, հանդիսավորապես հայտարարեց նաև բանվորագյուղացիական Ուկրաինայի և Սովետական Ռուսաստանի անխախտ դաշինքի հաստատումը։ Այդպես վարվեցին նաև նախկին ռուսական կայսրության տարածքում 1918—1919 թթ. ստեղծված անկախ սովետական հանրապետությունները՝ լատվիականը, լիտվականը, էստոնականը, բելոռուսականը. «Հեղափոխության ընթացքում նախկին ցարական Ռուսաստանի ժողովուրդների ստեղծած բոլոր սովետական հանրապետություններին հատուկ էր ֆեդերատիվ միավորման բնական ձգտումը»[9]։ Այդպիսով, մեր երկրում ընթանում էր ազգերի և ազգությունների ինքնորոշման երկմիասնական պրոցեսը՝ սովետական հանրապետությունների և սովետական ինքնավարության ձևերով։ Այդ ձևերից յուրաքանչյուրը սովետական բազմազգ պետության ստեղծման պրոցեսում փոխլրացնում էր մեկը մյուսին։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունից հինգ տարի անց ցարիզմի ճնշած բոլոր ազգերն իրավահավասար հիմքի վրա միավորվե-

8 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 24, էջ 184։

9 «Постановление ЦК КПСС о подготовке к 50-летию образования Союза Советских Социалистических республик», М., 1972, с. 8.

ցին ազատ ժողովուրդների լենինյան միության մեջ։ Նախքան սովետների համամիութենական սահմանադիր համագումարը համաշխարհային պատմությունը չդիտեր այնպիսի օրինակ, երբ մի քանի անկախ հանրապետություններ լիակատար հավասարության, նրանց սուվերենության հարգման, միությունից միակողմանի ազատ դուրս գալու իրավունքի ճանաչման հիման վրա կամավոր միավորվեին մի բազմազգ պետության մեջ։ Սովետական իշխանությունը համոզիչ ցույց տվեց, թե ինչ ուղիների վրա պետք է փնտրել ազգային հարցի լուծումը՝ հարգելով յուրաքանչյուր ժողովրդի սուվերենությունը և, միևնույն ժամանակ, ամբողջ երկրի ընդհանուր շահը, երկիր, որը բնակեցնում են ավելի քան 100 ազգեր ու ազգություններ։ 1918 թ. սկզբին ինքնավարության հենքի վրա ՌՍՖՍՀ հռչակումից հետո ֆեդերատիվ սկզբունքներով սովետական հանրապետությունների միավորման կարևոր ուղենիշ էր Անդրֆեդերացիայի ստեղծումը։ Այն անմիջականորեն նախորդեց ՍՍՀՄ կազմավորմանը և նկատելիորեն արագացրեց այն։ Վ. Ի. Լենինը հաշվի առնելով Անդրկովկասի տնտեսական ամբողջականությունը, նրա վերածննդի և ինտերնացիոնալիզմի ոգով ազգային հարաբերությունների զարգացման անհրաժեշտությանը, անդրկովկասյան հանրապետությունների ուշադրության կենտրոնում դրեց նրանց տնտեսական մերձեցման և միավորման հարցը։ Այդ գաղափարով էին ներծծված նրա «Միասնական տնտեսական պլանի մասին» հոդվածը, նամակները՝ «Ադրնեֆտի» նախագահ Ա. Սերեբրովսկուն, Գ. Օրջոնիկիձեին և Համկոմ-ի կոմունիստական ֆրակցիայի նիստում կոնցեսիաների մասին զեկուցման առթիվ եզրափակիչ խոսքը[10]։

Լենինյան գաղափարի կենսագործման ճանապարհին առաջին քայլն անդրկովկասյան երկաթուղիների և արտաքին առևտրի ժողկոմատների միավորումն էր (1921 թ. ապրիլ—հունիս)։ Այդ ուղղությամբ երկրորդ քայլն Ադրբեջանի և Վրաստանի ճյուղային ժողկոմատների տնտեսական ջանքերի միավորման նպատակով տնտեսական բյուրոյի ստեղծումն էր (1921 թ. օգոստոս)։ 1921 թ. նոյեմբերի 28-ին Վ. Ի. Լենինը կազմեց անդրկովկասյան հանրապետությունների ֆեդերացիայի կազմավորման մասին ՌԿ(բ)Կ Կենտկոմի որոշման նախագիծը։ ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոն 1921 թ. նոյեմբերի 29-ին ընդունեց Անդրֆեդերացիայի կազմավորման մասին լենինյան բանաձևը։ ԱՍՖՍՀ կազմավորումը ուղի բացեց պետական, տնտեսական և կուլտուրական շինարարության մեջ Անդրկովկասի ժողովուրդների համախմբման և սերտ միասնության, եղբայրական բարեկամության ու կուլտուրայի ծաղկման համար։ Այն վրացական, հայկական և ադրբեջանական հանրապետություններին թույլ տվեց իրագործել լենինյան ցուցումը՝ ստեղծել ազգային խաղաղության օրինակելի նմուշ, զարգացնել ժողովրդական տնտեսությունը, գիտությունը, կուլտուրան, արվեստը, սկսել անցումը սոցիալիզմին։

ՍՍՀՄ-ի ստեղծումը բոլոր սովետական հանրապետությունների և ինքնավար մարզերի ժողովուրդների միահամուռ ցանկությունն էր։ Որպես մեր երկրի ժողովուրդների կամավոր պետական միավորում՝ ՍՍՀՄ կազմավորումը, ինչպես և մինչ այդ ՌՍՖՍՀ և ԱՍՖՍՀ ստեղծումը կապված են Վ. Ի. Լենինի անվան հետ։ Նա ելնում էր այն բանից, որ ֆեդերացվող հանրապետությունների պետական միավորման հիմքերի ճիշտ ընտրությունը հսկայական նշանակություն ունի։ ՍՍՀՄ կազմավորման սկզբունքների մշակման ժամանակ Վ. Ի. Լենինը մերժեց ինքնավարացման նախագիծը, որը ենթադրում էր անկախ հանրապետությունների խիստ միասնություն և ջանքերի կենտրոնացում, սակայն դրանով հանդերձ խախտում էր նրանց սուվերեն իրավունքները։ Նախագիծը նախատեսում էր սովետական անկախ հանրապետությունների մուտքը ՌՍՖՍՀ կազմի մեջ՝ ինքնավարության սկզբունքներով, այսինքն այդ սուվերեն հանրապետությունները վեր էին ածվում ինքնավարի, սահմանափակում էր դրանց պետական ինքնուրույնությունը։ Վ. Ի. Լենինը

[10] В. И. Ленин, ПСС, т. 43, с. 186, 324; т. 52, с. 124, 136.

խիստ քննադատեց այդ նախագիծը և ցույց տվեց, որ այն նահանջ է պրոլետարական ինտերնացիոնալիզմի սկզբունքից, և մեծապետական շովինիզմի դիրքերից խեղաթյուրում է սովետական հանրապետությունների կամավոր միավորման գաղափարը[11]։

1922 թ. դեկտեմբերի 30—31-ը տեղի ունեցավ սովետների համամիութենական I համագումարը, որը կազմավորեց ՍՍՀՄ-ը՝ բանվորների և գյուղացիների աշխարհում առաջին միասնական միութենական բազմազգ պետությունը։ Նրա կազմակերպիչներն էին ՌՍՖՍՀ-ը, ՈՒՍՍՀ-ը, ԲՍՍՀ-ը և ԱՍՖՍՀ-ը։ Արդեն այդ ժամանակ ՍՍՀՄ-ը ներկայացնում էր բազմակերպ պետական համակարգ, որն ընդգրկում էր 6 սովետական, 13 ինքնավար հանրապետություն և 16 ինքնավար մարզ։ Սովետական միութենական պետությունը և ազգային պետականության տարբեր ձևերը հանդիսացան ազգերի ու ազգությունների պետական կազմակերպության այն ձևերը, որոնց լրիվ հաջողվեց համատեղել նրանց ազատ զարգացման և անցյալում չտեսնված սոցիալ-տնտեսական առաջընթացի պահանջը։ ՍՍՀՄ կազմավորումից հետո սովետական միութենական և ազգային պետականության զարգացման կարևոր ուղենիշ եղավ Միջին Ասիայի հանրապետությունների ազգային-պետական սահմանազատումը։ 1924 թ. ստեղծվեցին Ուզբեկական և Թուրքմենական սովետական միութենական հանրապետությունները և Կիրգիզական ինքնավար մարզը, որը 1926 թ. վերակազմավորվեց Կիրգիզական ինքնավար հանրապետության, Կարակալպակյան ինքնավար մարզը, որը 1932 թ. վերակազմավորվեց նույն անվամբ ինքնավար հանրապետության, Տաջիկական ԱՍՍՀ-ն, որը 1929 թ. վերակազմավորվեց միութենական հանրապետության։

Որպես միութենական պետության՝ ՍՍՀ Միության հետագա զարգացումը կապված է 1936 թ. ընդունված ՍՍՀՄ երկրորդ սահմանադրության հետ, որի համաձայն ԱՍՖՍՀ-ն վերացվեց և Վրացական, Հայկական ու Ադրբեջանական ՍՍՀ-ներն անմիջականորեն մտան ՍՍՀՄ-ի կազմի մեջ, որպես միութենական հանրապետություններ։ Այդ ժամանակ էլ ՍՍՀՄ-ի կազմի մեջ մտան միութենական հանրապետությունների վերակազմավորված Ղազախական և Կիրգիզական ինքնավար հանրապետությունները, որոնք նախկինում մտնում էին ՌՍՖՍՀ-ի մեջ։ 1940 թ. որպես միութենական հանրապետություն ՍՍՀՄ-ի կազմի մեջ մտան Մոլդավիան, որը կազմավորվեց Բեսարաբիան մեր երկրին վերադարձնելու և մոլդավական ժողովրդի վերամիավորման հետևանքով, ինչպես և լիտվական, լատվիական ու էստոնական հանրապետությունները, որոնցում վերականգնվել էին սովետական կարգերը։ Այժմ Սովետական Միությունը 15 միութենական հանրապետությունների պետական միավորում է, հանրապետություններ, որոնք իրենց հերթին միավորում են 20 ինքնավար հանրապետություն, 8 ինքնավար մարզ և 10 ինքնավար օկրուգ։ 1959 թ. մարդահամարի տվյալներով, ՍՍՀՄ բնակչության 97,6%-ն ունի իր ազգային պետականությունը։ Արդեն հենց միայն այդ է որոշում սովետական ազգային պետականության կարևոր դերը սովետական բազմազգ պետության համակարգում։ Իրենց պետականությունը ստեղծած ՍՍՀՄ ժողովուրդներից ավելի քան 30-ի մոտ այն կրում է ինքնավար մարզի կամ ազգային, այժմ՝ ինքնավար, օկրուգի ձև։

Մեր երկրի ազգերի և ազգությունների առջև կանգնած բազմաթիվ բարդ պրոբլեմներից Վ. Ի. Լենինն առանձնացնում էր գլխավորը՝ նրանց տնտեսական և կուլտուրական հետամնացության վերացումը և ռուս ազգի հետ փաստական հավասարության հասնելու համար առավելագույն բարենպաստ պայմանների ստեղծումը։ Վ. Ի. Լենինի ցուցումների հիման վրա մշակվեց ազգային հանրապետությունների ու մարզերի արագացված տնտեսական, կուլտուրական և սոցիալ-քաղաքական արագ զարգացման, դրանց նյութական և հոգևոր ուժերի վերելքի, նախկինում հետամնաց ազգերի ու ազգությունների ծաղկման ավելի արագ տեմպերի ծրագիր։ Այդ բնագավառում առաջին հաջո-

[11] В. И. Ленин, ПСС, т. 45, с. 356.

ղությունները ձեռք բերվեցին դեռ Վ. Ի. Լենինի կենդանության օրոք և նշանակալի չափով եղան նրա ամենօրյա ուշադրության ու օգնության, նրա խորհուրդների ու ցուցումների արդյունքը։

Հետագայում, ղեկավարվելով Լենինյան ծրագրով, կուսակցության X, XI և հետագա համագումարների որոշումներով, ռուսական պրոլետարիատը, Սովետական Ռուսաստանն ազգային հանրապետություններին ու մարզերին դրանց փաստական անհավասարության հաղթահարման նպատակով բազմակողմանիորեն օգնում էին մեքենաներով, սարքավորումներով, ինժեներական, տեխնիկական ու բանվորական կադրերով։ Դա իսկական ինտերնացիոնալիզմի դրսևորում էր, որը մեր երկրի ժողովուրդներն արդարացիորեն գնահատեցին որպես ռուս ժողովրդի, ռուսական պրոլետարիատի պատմական սխրանք[12]։ Ազգային հանրապետություններն իրենց հերթին առավելագույն արդյունավետությամբ օգտագործելով ռուս ժողովրդի օգնությունը, ստեղծելով իրենց տնտեսությունը, իրենց նվաճումները դիտում էին որպես կոնկրետ ներդրում սովետական պետության տնտեսության ամրապնդման գործում և ՍՍՀՄ բոլոր ժողովուրդների հանդեպ ինտերնացիոնալ պարտքի կատարում։

Անցյալում հետամնաց ազգային հանրապետությունները, մարզերն ու օկրուգները միութենական պետության, ինչպես նաև մշտական համագործակցության ու փոխօգնության շնորհիվ պատմական կարճ ժամկետում դուրս եկան տնտեսական հետամնացության անդունդից։ Արդեն ՍՍՀՄ երկրորդ սահմանադրության ընդունման պահին (1936 թ.) ազգային հանրապետությունները տնտեսական առումով հիմնականում հաղթահարել էին փաստական անհավասարությունը։

Զարդանալով Վ. Ի. Լենինի նշած ուղիով, ՍՍՀՄ-ի հետամնաց ազգերն ու ազգություններն աշխարհում առաջինն իրագործեցին նահապետական-ֆեոդալական, իսկ որոշ դեպքերում տոհմային կարգերից անցումը սոցիալիզմին՝ շրջանցելով զարգացման կապիտալիստական փուլը։ Այդ համաշխարհային-պատմական փաստն ընդունվեց ՍՍՀՄ բոլոր ժողովուրդների կողմից և արտացոլվեց մեր երկրի պետական իշխանության բարձրագույն մարմինների պատմական ակտերում։ «Շրջանցելով կապիտալիզմի տանջալից փուլը,— ասված է 1936 թ. ՍՍՀՄ երկրորդ սահմանադրության նախագծի համաժողովրդական քննարկման արդյունքների մասին համաթուրքմենական սովետների VI, արտակարգ համագումարի որոշման մեջ,— ազատ թուրքմենական ժողովուրդը մի քանի տարիների ընթացքում հետամնաց ռուսաստանյան գաղութից փառավոր ուղի անցավ դեպի ծաղկող սոցիալիստական հանրապետություն, համարվելով մեծ Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության իրավահավասար անդամը»[13]։ ՍՍՀՄ կազմավորումից հետո մեր երկրի ժողովուրդների ամենանշանակալի նվաճումներից մեկն այն էր, որ սովետական մարդիկ իրենց անձնազոհ աշխատանքով և հայրենիքին անսահման նվիրվածությամբ հասան աննախընթաց տնտեսական ու կուլտուրական թռիչքի, զարգացած սոցիալիստական հասարակության կառուցման։ 1967—1971 թթ. միութենական և ինքնավար հանրապետությունների աշխատավորները նշեցին իրենց պետականության 50-ամյակը։ «Դա,— ՍՄԿԿ XXIV համագումարում ասաց Լ. Ի. Բրեժնևը,— սոցիալիստական ազգերի ծաղկման, մեր հայրենիքի բոլոր ժողովուրդների միաձույլ միասնության տպավորիչ ցույց էր»[14]։

ՍՍՀՄ զարգացման վերջին հնգամյակի սովետական պետության կարևորագույն պետական-իրավական ակտը ՍՍՀՄ նոր սահմանադրության ընդունումն էր։ Այն հաստատեց սովետական նախկին սահմանադրություններում ամրապնդված ՍՍՀՄ ազգային-պետական կառուցվածքի լենինյան սկզբունք-

---

12 А. М. Егиазарян, Об основных тенденциях развития социалистических наций СССР, Ереван, 1965, с. 16.

13 «Съезды советов в документах 1917/1937 гг.», т. 8, М., 1965, с. 623.

14 «ՍՄԿԿ XXIV համագումարի նյութերը», Երևան, 1971, էջ 100։

ները, զարգացած սոցիալիզմի պայմաններին համապատասխան զարգացրեց դրանց դրույթները՝ ցուցադրելով մեր երկրի ժողովուրդների լենինյան հղբայրության և դաշինքի սաեղծարար ուժը։

ՍՍՀՄ կազմավորման 60-ամյակն այն կազմավորող պետությունները նոր, ավելի արտահայտիչ ցուցանիշներով են դիմավորում՝ բազմապատկելով երկրի տնտեսական պոտենցիալը։ «Անցած 60 տարիները,— նշված է «Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության 60-րդ տարեդարձի մասին» ՍՄԿԿ Կենտկոմի որոշման մեջ,— նշանավորվեցին Սովետական Միության սոցիալ-տնտեսական շեշտակի զարգացմամբ։ Այդ ժամանակամիջոցում ազգային եկամուտը բազմապատիկ աճեց։ Համաշխարհային արդյունաբերական արտադրության մեջ ՍՍՀՄ-ի բաժինը 1922 թ. մեկ տոկոսից բարձրացավ ու հասավ ներկայիս քսան տոկոսին»[15]։ ՍՍՀՄ-ի պրակտիկան համոզիչ ցույց է տալիս, որ նրանում հասարակական արտադրությունը ենթարկված է ժողովրդի բարեկեցության բարձրացման, աշխատավորների նյութական և հոգևոր պահանջների ավելի լիակատար բավարարման խնդրին։ Սովետական Միության միութենական հանրապետություններին բնորոշ են բարձր զարգացած արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը, գիտությունն ու արվեստը, բովանդակությամբ սոցիալիստական, ձևով ազգային մշակույթի իսկական ծաղկումը։

Այսպիսով, սովետական ազգային պետականության զարգացումն ընթացել և ընթանում է մեծ Լենինի նախագծած ուղիով։ Վ. Ի. Լենինի հանճարի մեծությունն արտահայտվել է և՛ սոցիալիզմի կառուցման ժամանակաշրջանում, և՛ այն բանում, որ ՍՄԿԿ նոր Ծրագիրը և կուսակցության XXIII—XXVI համագումարների որոշումները՝ ընդունված Վ. Ի. Լենինի ուսմունքի ոգով, կանխորոշել են սովետական ազգային-պետական հարաբերությունների կոնկրետ և հեռանկարային զարգացման ուղղությունները։

ОБРАЗОВАНИЕ И РАЗВИТИЕ СССР—ТОРЖЕСТВО ЛЕНИНСКОГО УЧЕНИЯ О ЕГО НАЦИОНАЛЬНО-ГОСУДАРСТВЕННОМ УСТРОЙСТВЕ

АРМЕНАК БЕГИЯН

Резюме

Закономерностью развития Советов с первых дней превращения их в политическую основу социалистического государства стали неуклонное государственное сближение всех населявших Россию наций, их растущие братство и дружба. Под руководством В. И. Ленина был образован Союз ССР—первое в мире Советское многонациональное государство рабочих и крестьян.

Построенные на ленинских принципах, Советское союзное государство и различные формы советской национальной государственности оказались теми формами государственной организации наций и народностей, которым в полной мере удалось совместить требование свободного их развития и невиданного в прошлом экономического и социального прогресса страны в целом.

Важнейшим государственно-правовым актом Советского государства последнего пятилетия развития Союза ССР явилось принятие Конституции СССР. Она подтвердила ленинские принципы национально-государственного устройства СССР, закрепленные в прежних советских конституциях, развила их положения в соответствии с условиями развитого социализма, демонстрируя великую созидательную силу ленинского братства и союза народов страны Советов.

---

15 «Սովետական Հայաստան», 21. II. 1982։